

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ԲԱԲԼՈՒՄՅԱՆ ԱՐՓԻՆԵ ՈՒՐԻԿԻ**

**ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ  
ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ  
(ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)**

**Է.00.01 – «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր**

**ԵՐԵՎԱՆ-2012**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Մելքոնյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Հարությունյան Հ.Մ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Հայրապետյան Ա. Ա.

Առաջատար կազմակերպություն ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հունիսի 10-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Դարեր շարունակ Օսմանյան կայսրության վարած հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասն է եղել երկրի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը: Կայսրության կիրառած ազգային, սոցիալական, կրոնական խտրական քաղաքականությունը ժամանակի ընթացքում հանգեցնում էր հայկական տարածքների հայաթափմանն ու հայ բնակչության թվաքանակի նվազմանը Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ մյուս տարածքներում: XIX դարի վերջերին թուրքական տերության գրեթե բոլոր հայաբնակ վայրերում իրականացված ջարդերը ժողովրդագրական մեծ փոփոխությունների հանգեցրին: Գրեթե նույն ժամանակաշրջանում մեծ չափեր ընդունեց կայսրությունից, մասնավորապես Խարբերդի նահանգից հայ բնակչության ԱՄՆ սկսած արտագաղթը: Ծրագրի հանգուցալուծումը դարձավ Հայոց ցեղասպանությունը:

Զնայած Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության հետազոտության արդիականությանը՝ այդ բնագավառը մինչ օրս մնում է ոչ բավարար ուսումնասիրված, ինչը խոչընդոտում է նաև Հայոց ցեղասպանության պատմության ամբողջական, համալիր ուսումնասիրմանն ու ներկայացմանը: Խնդրի համալիր հետազոտությունը թույլ կտա փաստելու, որ Օսմանյան կայսրության հայաբնակ բնակավայրերը և հատկապես Արևմտյան Հայաստանը հայազրկելը եղել է օսմանյան իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության գլխավոր նպատակը:

Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչության ժողովրդագրության ուսումնասիրությունն ունի գիտաքաղաքական կարևորություն: Նահանգի տարածքում քիչ չէին այն բնակավայրերը, որոնց բնակչությունը կրոնափոխ էր արվել դեռևս դարեր առաջ, մյուս կողմից՝ համիդյան կոտորածներն ու Հայոց ցեղասպանությունը՝ իր գործադրման մեխանիզմներով ու մեթոդներով, այս նահանգի դեպքում բնորոշիչ օրինակներ կարող են հանդիսանալ նաև մյուս վարչամիավորների համար:

Ուսումնասիրողներից ոմանք, իհարկե, մեծամասամբ թուրք «պատմաբաններ», շարունակելով Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որպես կանոն, ներկայացնում են վիճակագրական այնպիսի տվյալներ, որտեղ թե՛ հայ բնակչությունն է նվազեցվում, թե սակավ է ցույց տրվում տարբեր բնակավայրերից տեղահանվածների ու սպանվածների թվաքանակը: Ուստի կարևոր է ճշգրտել հայության իրական թվական տեսակարար կշիռը կայսրության տարբեր նահանգներում, տվյալ դեպքում՝ Խարբերդի նահանգում: Ներկայացված իրողություններով է պայմանավորված խնդրո առարկա թեմայի ուսումնասիրության կարևորությունը, արդիականությունն ու համակողմանի հետազոտման անհրաժեշտությունը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության հիմնական նպատակն է արխիվային և հրատարակված վավերագրերի, ժամանակակիցների հուշերի, գիտական ուսումնասիրությունների հիման վրա լուսաբանել Խարբերդի նահանգի հայ բնակչության ժողովրդագրական շարժընթացը

XIX դարի վերջերին և XX դարի սկզբին: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել Խարբերդի նահանգի վարչական կառուցվածքը, անդրադարձ կատարել նահանգի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությանը, հիմնական զբաղմունքներին, նահանգի մյուս ժողովուրդների հետ ունեցած առնչություններին,
- Եղած սկզբնաղբյուրների, ականատեսների վկայությունների հիման վրա ներկայացնել համիոյան կոտորածների պատկերը Խարբերդի նահանգում,
- Ուսումնասիրել ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերդի նահանգում XIX դարի վերջերին և XX դարի սկզբին,
- Եղած փաստական նյութի հիման վրա հաշվարկել Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչության թվաքանակը նահանգի Խարբերդ, Ղերսիմ, Մալաթիա գավառներում,
- Լուսաբանել Խարբերդի նահանգի հայ բնակչության բնաջնջման մեխանիզմներն ու մեթոդները 1915 թ. ընթացքում,
- 1915 թ. վերջի դրությամբ մոտավոր հաշվարկել Խարբերդի նահանգի հայ բնակչության զոհերի թվաքանակը,
- Ներկայացնել 1915 թ. փրկված ու Խարբերդի նահանգի տարածքում ապրող հայերի վիճակը, թվաքանակը, վերջնական տեղահանությունը:

**ԱՄԵՆԱՄՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԱԲՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ:** Ատենախոսությունը շարադրված է պատմահամեմատական, համադրական, վերլուծական մեթոդների զուգորդմամբ: Տարբեր աղբյուրների, գրականության համալիր վերլուծության ու համադրման միջոցով փորձել ենք հաշվարկել 1915 թ. նախօրյակի դրությամբ հայ բնակչության մոտավոր թվաքանակը Խարբերդի նահանգում, ինչպես նաև Հայոց ցեղասպանության տարիներին տվյալ տարածքի հայության մարդկային կորուստները: Հաշվարկը կատարվել է տեղահանվածների խմբերի մի քանի օրինակներում զոհերի թվաքանակի միջին հաշվարկով:

**ԱՄԵՆԱՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՐՋԱՆԱԿՆԵՐԸ:**

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1880-ականներից մինչև 1923 թ.: Նշված փուլում Խարբերդի նահանգում արձանագրված ժողովրդագրական փոփոխությունները՝ արտագաղթ, զանգվածային կոտորածներ, ցեղասպանություն, գրեթե ամբողջությամբ փոխեցին սույն վարչամիավորի ժողովրդագրական պատկերը: 1922-1923 թթ. իրականացվեց նահանգի տարածքում բնակվող քրիստոնյա հայերի վերջին զանգվածային տեղահանությունը:

**ԱՄԵՆԱՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ**

**ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչության ժողովրդագրական փոփոխությունների թեման նախկինում առանձին հետազոտության նյութ չի հանդիսացել: Ատենախոսության շրջանակներում փորձ է արվում մոտավոր հաշվարկել 1915 թ. դրությամբ հայ բնակչության թվաքանակը Խարբերդի նահանգի գավառներում և գավառակներում: Տարբեր տվյալների համադրությամբ առաջին անգամ մոտավոր

հաշվարկվել է նաև Հայոց ցեղասպանության տարիներին նահանգի հայ բնակչության զոհերի, բռնի իսլամացվածների թվաքանակը:

Բացի գիտականից, ատենախոսությունն ունի նաև ճանաչողական, կիրառական նշանակություն: Ատենախոսության մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են լույս սփռել մինչև 1915 թ. ընկած ժամանակահատվածում արևմտահայության կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող իրադարձությունների վրա: Ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել Արևմտյան Հայաստանի, Օսմանյան կասրության հայաբնակ երկրամասերի հայ բնակչության թվաքանակի խնդիրների, Հայոց ցեղասպանության պատմության տարբեր հարցերի ուսումնասիրության մեջ, օժանդակել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացին:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:** Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած չորս հոդվածներում և հանրապետական գիտական նստաշրջաններում ընթերցված զեկուցումներում:

**ԹԵՄԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԻՃԱՆԸ (ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ):** Ատենախոսության առաջադրած խնդիրների լուսաբանման նպատակով օգտագործվել են բազմալեզու աղբյուրներ, աղբյուրագիտական նշանակություն ունեցող գրականություն, մամուլ, պատմագիտական ուսումնասիրություններ:

Աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվի<sup>1</sup> և հատկապես Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերում պահվող փաստաթղթերը<sup>2</sup>: Օգտագործված փաստաթղթային նյութը հիմնականում բաղկացած է վիճակագրական ցուցակներից, որտեղ արտացոլված է Խարբերդի նահանգի տարբեր գավառների հայ բնակչության թվաքանակը: Սրանք հիմնականում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տարբեր վիճակների առաջնորդների կողմից 19-րդ դարի վերջերին պատրաստված ցուցակներ են:

Բացառիկ աղբյուրագիտական կարևորություն ունեն ժամանակակիցների, ականատեսների վկայությունները, ճանապարհորդական նոթերը, հուշագրությունները, ուսումնասիրությունները: Դրանք Խարբերդի նահանգի հայ բնակչության ժողովրդագրությանը վերաբերող կարևոր փաստագրական նյութ են պարունակում: Առավել մեծ արժեք են ներկայացնում հայ հեղինակների՝ Գ. վրդ. Սրվանձտյանցի, Ս. Էփրիկյանի, Հ. Ջանիկյանի, Պ. Նաթանյանի, Անդրանիկի, Կ. քահանա Պեննեյանի

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 476, ց. 1, գ. 33, 197, 260, 788, 828, 891, ֆ. 447, ց. 1, գ. 21, 27, 39:

<sup>2</sup> ԳԱԹ, Ս. Հայկունու ֆ., թղթ. 69, Թ. Ազատյանի ֆ., 34/III, 37/III, 47/III, Գ. Սրվանձտյանցի ֆ., ց. 1, գ. 82:

աշխատությունները<sup>3</sup>, որոնցում հարուստ պատմական, էթնոօրոլոգիազրական նյութ կա Խարբերդի հայ ազգաբնակչության թվաքանակի, զբաղմունքների վերաբերյալ: Աշխատանքի համար մեծ կարևորություն ունի նաև ռուս զեներալ Ա. Կոլյուբակինի աշխատանքը<sup>4</sup>՝ իր Խարբերդի, Չարսանջակի, այլ գավառակների ժողովրդագրության, սոցիալ-տնտեսական կյանքին առնչվող հարուստ տեղեկություններով:

Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակի հաշվարկման տեսանկյունից առանձնահատուկ են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-1914 թթ. վիճակագրական ցուցակի երկու հրատարակությունները՝ Թեոդիկի<sup>5</sup> և Ռ. Գևորգյան ու Պ. Փաբուճյանի<sup>6</sup> կողմից: Դրանց ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ ցուցակներում չկան մի շարք բնակավայրերի վերաբերյալ տվյալներ, մյուսներն էլ թերի են և չեն արտացոլում Խարբերդի նահանգի հայ բնակչության իրական թվաքանակը: Կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունի նաև Բ. Եղիայանի ուսումնասիրությունը<sup>7</sup>, որում հեղինակը հրատարակել է Կիլիկիայի կաթողիկոսարանի դիվանում պահվող փաստաթղթերը, որոնց մի մասը մեծ արժեք է ներկայացնում սույն աւտենախոսության համար:

Աւտենախոսության շարադրանքի ընթացքում աղբյուրագիտական բացառիկ նշանակություն են ունեցել համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության ականատես օտարերկրացիների վկայությունները, օրագրերը, տեղեկագրերը, հուշագրությունները: Համիդյան կոտորածների պատմության ուսումնասիրման առումով հատկապես մեծ կարևորություն ունեն Է. Բլիսի<sup>8</sup>, Ֆ. Գրինի<sup>9</sup>, Պ. Շարմետանի<sup>10</sup>, Ռ. և Հ. Հարիսների<sup>11</sup>, Ջ. Հեփվորթի<sup>12</sup> աշխատանքները, որտեղ կոտորածների ընթացքի ու

---

<sup>3</sup> Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, Կ.Պոլիս, 1884: Էփրիկեան, Պատկերագրոք բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, հ. 2, Վենետիկ, 1907: Ճանիկեան Յ., Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1895: Նաթանեան Պ., Արտօսր Հայաստանի, Կ.Պոլիս: Անդրանիկ, Տէրսիմ. Ճանապարհորդութիւն եւ Տեղագրութիւն, Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւն, Թիֆլիս, 1900: Պէննէան Կ., Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը եւ Գրիգոր Խանձեանի Մալաթիոյ գաւարաբարբառը, հրատարակութիւն՝ Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան:

<sup>4</sup> Колубакинъ А. Материалы для Военно-Статистическаго Обзорения Азиатской Турции, томъ III, часть I, отдель 2-й, Тифлисъ, 1891.

<sup>5</sup> Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985:

<sup>6</sup> Ke'vorkian R., Paboudjian P., Les Arme'niens dans l'empire Ottoman. A la veille du Ge'nocide, Paris, 1992.

<sup>7</sup> Եղիանեան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975:

<sup>8</sup> Bliss Rev. E. Turkey and the Armenian Atrocities, Fresno, Ca., Meshag publishing, 1982.

<sup>9</sup> Greene F. Armenian Massacres or the Sword of Mohammed, Philadelphia and Chicago, 1896.

<sup>10</sup> Charmetant P. F<sup>x</sup>, Tableau officiel des massacres d'Arménie dressé aprés enqutes par les six ambassades du Constantinople et statistique dressé par des tmoins oculaires grégoriens et protestants, Au Bureau des Œuvres D'Orient, Paris.

<sup>11</sup> Harris R. and Harris H., Letters from the Scenes of the recent Massacres in Armenia, London, James Nisbet & Co., 1897.

<sup>12</sup> Hepworth G. Through Armenia on Horseback, New York, E. P. Dutton & Company, 1898.

հետևանքների վերաբերյալ Խարբերդի նահանգին անմիջականորեն առնչվող հսկայական փաստական նյութ կա:

Մասնավորապես ամերիկացի միսիոներ, հրապարակախոս Է. Բլիսը “The Independent”-ի, այլ լրատվամիջոցների հրապարակումների, ականատեսների գրառումների, նամակների հիման վրա ներկայացրել է 1894-1896 թթ. ողջ կայսրության տարածքում օսմանյան իշխանությունների կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածների պատմությունը, առանձին հատվածում անդրադարձել նաև Խարբերդի նահանգում իրագործված կոտորածների ընթացքին, կրոնավիճակային դեպքերին:

Համիդյան կոտորածների պատճառներն են վերլուծվում Ֆ. Գրինի աշխատության մեջ, որում հեղինակը մանրամասն նկարագրվում է նաև 1890-ականներին հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, անդրադառնում օտարերկրյա միսիոներական կազմակերպությունների գործունեությանը:

Կարևոր աղբյուր է նաև Հելեն և Ջ. Ռենդել Հարրիսների՝ Մեծ Բրիտանիայի իրենց ընկերների հետ ունեցած նամակագրությունը՝ հրատարակված «Նամակներ՝ գրված Հայաստանում վերջին կոտորածների վայրերից» վերնագրով: Նամակները գրված են ինչպես Կոստանդնուպոլսից, Ջմյուռնիայից, այնպես էլ՝ Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից՝ հատկապես Խարբերդից, Ակնից ու Դիարբեքիից: Հեղինակները մեջբերել են նաև Օսմանյան կայսրության տարածքում գործունեություն ծավալած և համիդյան կոտորածների ականատես օտարերկրացիների՝ միսիոներներ, դիվանագետներ, զեկույցներից, նամակներից, նոթերից հատվածներ: Գրքում տեղ գտած նամակները արժեքավոր տեղեկություններ են պարունակում հատկապես Խարբերդի նահանգի բնակավայրերում իրագործված կոտորածների ընթացքի, նաև՝ կոտորածներից հետո տվյալ բնակավայրերի՝ մասնավորապես Ակնի, Արաբկիրի, Խարբերդի դաշտի գյուղերի կարիքավորների վիճակի վերաբերյալ:

Հայոց ցեղասպանության օտարերկրացի ականատես-ժամանակակիցների վկայություններն այս առումով ևս անփոխարինելի են. այս դեպքում օգտագործվել է դիվանագետների, միսիոներների օրագիր-հուշագրություններ, փաստաթղթեր, որոնց հեղինակների գործունեության շրջանակը Հայոց ցեղասպանության տարիներին եղել է կոնկրետ Խարբերդի նահանգը: Նման աղբյուրներից են Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լ. Դևիսի<sup>13</sup>, միսիոներներ Ս. Յակոբսենի<sup>14</sup>, Հ. Ռիզզի<sup>15</sup>, Թ. Ատկինսոնի<sup>16</sup>, Ռ. Փարմելի<sup>17</sup> օրագրերը: Կարևոր են նաև Յ. Լեփսիուսի<sup>18</sup>, Յ. Կյունցլերի<sup>19</sup>, Ա. Յոհանսոնի<sup>20</sup> գրքերը:

<sup>13</sup> Դեվիս Լ., Սպանդի նահանգը. Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ., թարգմանությունը՝ Գրիգոր Ջանիկյանի, Երևան, 2001:

<sup>14</sup> Ճեյքոպլըն-Եագոպլըն Մարիա, Օրագրություն 1907-1919. Խարբերդ, Դանիերեն ձեռագիր բնագրին թարգմանեցին Ներսես եպս. Բախտիկեան, Սիիրան Սիմոնեան, Գրատուն Օմար Խայեան, Հալեպ-Սուրիա, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1979:

<sup>15</sup> Riggs H. Days of tragedy in Armenia: Personal Experience in Harpoot. 1915-1917, USA, 1997.

<sup>16</sup> Atkinson T. The German, the turk and the Devil made a triple Alliance, Harpoot diaries, 1908-1917, with a foreword by J.Michel Hagopian, Princeton, New Jersey, 2000.

Օգտագործված գրականության մյուս խումբը հայ պատմաբանների խմբագրությամբ հրատարակված արխիվային փաստաթղթերի ժողովածուներն են, որոնք ներառում են տարբեր երկրների արխիվներում պահվող նյութեր: Նման հրատարակություններից առանձնացնենք Մ. Ներսիսյանի, Վ. Միքայելյանի, Ա. Սարաֆյանի խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի և նյութերի ժողովածուները<sup>21</sup>:

Փաստաթղթերի ժողովածուներից ատենախոսության համար բացառիկ նշանակություն ունեն նաև լորդ Ջեյմս Բրայսի կողմից հրատարակված «Կապույտ գիրքը»<sup>22</sup>, ամերիկյան «Մերձավոր Արևելքի Նպաստամատույց» կազմակերպության հիմնադիր Ջ. Բարտոնի հրատարակած ժողովածուն<sup>23</sup>, փաստաթղթերի այլ ժողովածուներ<sup>24</sup>:

Ատենախոսության շրջանակներում օգտագործած աղբյուրագիտական նշանակություն ունեցող գրականության մյուս խումբը Հայոց ցեղասպանության վերապրողների հուշագրություններն ու հուշամատյաններն են, որ Խարբերդի նահանգի բնակավայրերի դեպքում առավել մեծաքանակ են, քան որևէ այլ բնակավայրի պարագայում: Այս խմբի մեջ կան ինչպես մի վերապրողի, ականատեսի վկայություններ, որ առնչվում են կոնկրետ բնակավայրի պատմությանը<sup>25</sup>, այնպես էլ ամբողջական

---

<sup>17</sup> Parmele R. A Pioneer in the Euphrates Valley, Gomidas Institute, Taderon Press, Princeton and London, 2002.

<sup>18</sup> Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի. Հայաստանի ջարդերը, թարգմանեց Միքայել Շամտանձեան, Կ.Պոլիս, 1919:

<sup>19</sup> Jakob Kunzler. In the Land of Blood and Tears: Experiencies in Mesopotamia During the World War (1914-1918), Translated from the 1999 German edition, Armenian Cultural Foundation, Arlington, Ma., 2007.

<sup>20</sup> Յոհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Հայոց ցեղ. թանգարան-ինստիտուտ, Երևան, 2008:

<sup>21</sup> Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմողներ՝ Մ.Գ. Ներսիսյան, Ռ.Գ. Սահակյան, Երևան, 1991: United States Official Records on the Armenian Genocide 1915-1917, compiled and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Princeton and London, 2004. Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում /1915-1918 թթ./, ըստ Կայսերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի վավերագրերի, կազմող Վ.Ա. Միքայելյան, Երևան, 2004:

<sup>22</sup> Bryce J. and Toynbee A. The treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916, Documents presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce, edited and with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute Princeton, New Jersey, 2000.

<sup>23</sup> Turkish Atrocities. Statements of American Missionaries on the Destruction of Christian Communities in Ottoman Turkey, 1915-1917, Compiled by James L. Barton, Gomidas Institute, Ann Arbor, Michigan, 1998.

<sup>24</sup> Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 года-10 мая 1914 года, Петроградъ, Гос. Типографія, 1915. Գերմանիան և Հայաստանը 1914-1918. Դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հատոր 1, հրատարակությունը և ներածությունը՝ Դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, Երևան, 2006:

<sup>25</sup> Մելիխինեցի Գ., Նախճիրներ /1915-1918/, Պոստոն, տպարան «Հայրենիք», 1929: The Auction of Souls. The Story of Aurora Mardiganian, the Christian Girl who Survived the Great Massacres, Interpreted by H. L. Gates, London. Մկրտիչեան Ե., Թուրքիոյ գեղեցիկն հայ ընտանիքի մը հրաշալի փախուստը. Ականատեսի պատմութիւն, Աղեքսանդրիա, 1918: Սեդրակ Շ., Յուշեր եւ փուշեր



գավառակների ու գավառների վերաբերյալ ուսումնասիրություններ: Վերջին խմբում հուշամատյաններն են, որ առնչվում են ամբողջական գավառակների, գավառների հայության կյանքի տարբեր ոլորտներին, ներառում բազմաթիվ հուշագրություններ, փաստաթղթեր, լուսանկարային նյութ: Այս շարքին են դասվում Վ. Հայկի<sup>26</sup>, Մ. Ճիզմեճյանի<sup>27</sup>, Ա. Ալպոյաճյանի<sup>28</sup>, Ս. Բախտիկյանի<sup>29</sup>, Ա. Փոլատյանի<sup>30</sup>, Գ. Երևանյանի<sup>31</sup>, Հ. Քեչյանի<sup>32</sup>, Հ. Գասպարյանի<sup>33</sup> խմբագրությամբ տարբեր երկրներում հրատարակված հուշամատյանները: Վերջիններս հիմնականում վերապրողների հուշագրություններ, Հայրենակցական միությունների գործունեության արդյունքում հավաքագրված տեղեկություններ են, որ կազմված են բարեխղճորեն և ունեն աղբյուրագիտական կարևորություն: Ինչ վերաբերում է այս հրատարակություններում հայության թվաքանակի վերաբերյալ եղած տվյալներին, ապա դրանք անվերապահորեն չեն ընդունվել, այլ համեմատության մեջ են դրվել եղած այլ տվյալների հետ:

Ատենախոսությանն առնչվող տարբեր խնդիրների լուսաբանման նպատակով օգտագործել ենք նաև հայ պատմագրության՝ տվյալ թեմային առնչվող աշխատություններ, ինչպես օրինակ՝ Ե. Խաթանասյանի<sup>34</sup>, Ա. Համբարյանի<sup>35</sup>, Հ. Ղազարյանի<sup>36</sup>, Լ. Վարդանի<sup>37</sup>, Ս. Գրիգորյանի<sup>38</sup>, Վ. Դադրյանի<sup>39</sup>, Ռ. Մելքոնյանի<sup>40</sup> աշխատություններն են:

---

Կեանքի ճանապարհին. Խարբերո, Արաբկիր, Մալաթիա, Քիւրտիստան, Տիգրանակերտ, Տարոն, Սասուն, Բալու եւ Քղի, Ա հատոր, Լօս Անճէլըս, Քալիֆորնիա, 1975: Կճիկեան /Առաքելեան/ Լեւոն. Մօրենիկ եւ իր սեւ տարին, Անթիլիաս-Լիբանան, 1969: Անջրդի եւ շրջակա գիւղերու ոճրագործներու արարքները. 1915-1918, Պոսթոն: Ծերօն Ս., Բարջանճ գիւղ. Համայնապատում/1600-1937/, Պոստոն, 1938: Տէրանեան Մարտիրոս, Հիւսէնիկ. Յուշեր եւ յոյգեր, Պոսթոն, 1981: Պօղոսեան Ա., Բազմաշէնի ընդարձակ պատմութիւնը իր հիմնարկութենէն մինչեւ վերջին օրերը, Պոստոն, տպ. Պայքար, 1930: Մխիթարեան Գ. Մեր գիւղը Դատեն, Պոսթըն, 1958: Շապուհեան Յ., Պատմութիւն Քօսիէ կամ Քէօրթ գիւղին, 1917|յուլիս 10, Ամերիկա, Լօվէլ: ՀՅԹ-Ի, բաժին 8, թղթ. 39: Թաճեան Մարտիրոս, Սեւ յուշեր նըձաւանջային եօթը տարիներու. 1915-1922, Պէյրուք, 1952: Չիթեան Հ., Մագի չափ մահին մօտ. եղեռնէն վերապրողի յուշեր, Taderon Press, 2004: Խրայեան Կ., Ծովք-Կէօլճիկ, Մարսէլ, 1927: Zahigian Krikor M., One Page of Armenia's Tragedy: A Story of the years wherein we have seen evil, 1923.

<sup>26</sup> Վահէ Հ., Խարբերո՞ղ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959:

<sup>27</sup> Ճիզմեճեան Մ., Խարբերո՞ղ եւ իր գաւաակները, Ֆրէզոնոյ, 1955:

<sup>28</sup> Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրուք, 1961:

<sup>29</sup> Բախտիկեան Ս., Արաբկիր եւ շրջակայ գիւղերը, Պէյրուք, տպ. «Վահագն», 1934: Նոյնի՝ Ոսկեգետակ, հատոր Գ, նուիրուած՝ Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերո՞ղի, Մալաթիոյ պատմութեան եւ ազգագրութեան, Պէյրուք, տպ. Հայկ-Պապ-Իտրիս, 1948:

<sup>30</sup> Փոլատեան Ա., Պատմութիւն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969:

<sup>31</sup> Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրուք, տպ. Կ.Տօնիկեան, 1956:

<sup>32</sup> Քեչեան Ա., Ակն եւ ակնցիք, հ. Բ, Փարիզ, Գեղ. տպ. Խ. Մաթիկեան, 1952:

<sup>33</sup> Գասպարեան Հ., Չմշկածագ եւ իր գիւղերը, Բոստոն, «Պայքար» տպարան, 1969:

<sup>34</sup> Խաթանասեան Ե., Հայոց թիւը, Բոստոն, 1965:

<sup>35</sup> Համբարյան Ա., Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում. 1856-1914, Երևան, 1965:

<sup>36</sup> Ղազարեան Հ., Ցեղասպան թուրքը, Պէյրուք, տպարան Համագգային, 1968:

<sup>37</sup> Վարդան Լ., Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի. 1915-1923, Պէյրուք, տպարան «Ատլաս», 1975:

Ատենախոսության շարադրանքի ընթացքում կարևորվել են նաև օտարալեզու պատմագրության աշխատությունները<sup>41</sup>: Պատմագիտական աշխատանքներից առանձնանում է Ռ. Հովհաննիսյանի խմբագրությամբ հրատարակված «Հայկական Շուփը-խարբերը»<sup>42</sup> գիրքը, որ ներառում է Խարբերդին ու Խարբերդի նահանգի պատմությանը, աշխարհագրությանը, գրականությանն առնչվող բազմաթիվ հոդվածներ, որոնցից առավելապես կարևորվել են Ռ. Հյունի «Շուփի հինգ «ժողովուրդները», «Ոսկեդաշտ», Բ. Ուոքերի «Խարբերդը 1915-1916 թթ.», Բ. Մերկերյանի, Վ. Շենասյանի հոդվածները:

Ատենախոսության շրջանակներում օգտագործվել են նաև Հայրենակցական միությունների հրատարակած ամսագրեր, «Հայրենիք», «Արձագանք Փարիզի», «Ոստան», «Արմյանսկի վեստնիկ», «Արարատ», «Ամենուն տարեցույց», «Արմենիան ռեվյու», «Արմենիա», «Մուրճ», «Նոր հոսանք», «Նոր կյանք» հանդեսներում<sup>43</sup> հրատարակված նյութեր:

Նշված սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները հիմք են հանդիսացել Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչության XIX դարի վերջերի և XX դարի պատմության լուսաբանելու համար:

### **ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:**

Ներկայացվող ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Հավելվածում տեղ են գտել Խարբերդի նահանգի գավառներում ու գավառակներում բնակվող հայ բնակչության թվաքանակն արտացոլող աղյուսակներ:

**ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ** մեջ հիմնավորվում է ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի

<sup>38</sup> Krikorian M. Armenians in the Service of the Ottoman Empire 1860-1908, London, Henley and Boston, Routledge and Kegan Paul, 1977.

<sup>39</sup> Dadrian V., Warrant for Genocide: Key Elements of Turko-Armenian Conflict, New Brunswick and London, Transaction Publishers, 1999.

<sup>40</sup> Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, հեղ. հրատարակություն, 2010:

<sup>41</sup> Winter J. America and the Armenian Genocide of 1915, Cambridge University Press, 2003. Walker Ch. Armenia. Survival of a Nation, London, 1982. Hewsen R. Armenia. A Historical Atlas, The University of Chicago Press, Chicago and London, 2001. Guenter L. The Armenian Massacres in Ottoman Turkey. A Disputed Genocide, Salt Lake City, 2005, Latimer E. The Last Years of The Nineteenth Century, second edition, Chicago, A. C. McCLURG & CO., 1901. Richter J., A History of Protestant Missions in the Near East, New York, AMS Press, 1970. Birken A. Die Provinzen Osmanischen Reiches, Dr. Ludwig Reichert, Wiesbaden, 1976. Strong W. The Story of The American Board, Boston, The Pilgrim Press, 1910.

<sup>42</sup> Armenian Tsopk/Kharbert, edited by R.Hovannisian, Costa Mesa, California, Mazda Publishers, 2002.

<sup>43</sup> «Նոր Արաբկիր տեղեկատու», «Հայրենիք» ամսագիր, թիւ 5, 6, 1966թ.: «Արձագանք Փարիզի», 1916թ., 1917թ., 1921թ.: «Ոստան», Ա տարի, թիւ 2, 1911: "ԸՐՎՎՐՍԻՐ ԹԵՐՑՎՈՍ", 1917 չ., «Արարատ», 1914, համար Թ, սեպտեմբեր: «Ամենուն տարեցույց», ժՁ տարի, 1922: "Armenian review", Summer 1988, vol. 41, no. 2-162, Wo., Ma. "Armenia" A Monthly Magazine, Vol. IV, No. 5, September, 1910. «Մուրճ», 7-8, 1896, յուլիս-օգոստոս: «Նոր կեանք», Լոնտոն, թիւ 6, 15 մարտ, 1898, թիւ 8, 15 ապրիլ, 1898, «Նոր հոսանք», Թիֆլիս, համար 6, 1913:

մեթոդաբանությունը, գիտական նորույթը ու գործնական, կիրառական նշանակությունը, ներկայացվում օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

**Առաջին գլուխը՝ «ԽԱՐԲԵՐՂԻ ՆԱՀԱՆԳԻ ԷԹՆՈԺՈՂՈՎՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ - XX ԴԱՐԻ ՍԿԶԵՆԵՐԻՆ»,** բաղկացած է երեք ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Խարբերղի նահանգի վարչական կառուցվածքը: Նահանգի հայ բնակչության սոցիալ-տնտեսական կացությունը»,** նախ ներկայացվում է Խարբերղի նահանգի վարչական բաժանումը:

Արևմտյան Հայաստանի Խարբերղի նահանգը, որը հիմնականում ընդգրկում էր պատմական Ծովքի տարածքը, եղել է հայ ժողովրդի կազմավորման, ձևավորման, կենսագործունեության հիմնական տարածքներից մեկը: Տարածքն օսմանյան տիրապետության տակ է անցել 1515-1517 թթ. ընթացքում: Այն մաս է կազմել Էրզրումի էյալեթի: Տարածքային բազմաթիվ վերածնունդներից հետո, որպես Օսմանյան կայսրության առանձին վարչական միավոր, Խարբերղի (Մամուրեթ ուլ Ազիզի) նահանգը կազմավորվել է արդեն 1879-1888 թթ.: 20-րդ դարի սկզբին այն վարչականորեն բաժանված էր 3 գավառների՝ Խարբերղ, Դերսիմ, Մալաթիա և 16 գավառակների:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության համաձայն Խարբերղի նահանգի տարածքում, բացի հայերից, ապրում էր 102000 թուրք, 95000 քուրդ, 80000 կլբաշ բնակիչ<sup>44</sup>: Նահանգի որոշ բնակավայրերում ապրում էին նաև ասորիներ: Հեղինակներից Ս. Բախտիկյանի տվյալներով՝ Խարբերղի ասորիների թաղամասում ապրում էր 150 տուն՝ 900 ասորի<sup>45</sup>: Ասորիներ ապրում էին նաև Մալաթիա քաղաքում, Շիրո, Այվոզ, Կարկառ գյուղերում<sup>46</sup>, Հյուսնի Մանսուր, Զյախտա գավառակների գյուղերում: Ընդհանուր առմամբ, նահանգի տարածքում, ըստ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության, ապրում էր 5000 ասորի<sup>47</sup>: Ս. Էփրիկյանը գրում է, որ հնուց հայերն ու ասորիները շատ ջերմ ու բարեկամական են եղել միմյանց հանդեպ, ընկերություն, խնամիրություն արել, այցելել միմյանց եկեղեցիները<sup>48</sup>: Նույն պատկերն էր տիրում նաև մինչև 1915 թ. ընկած ժամանակահատվածում: Հատկանշական էր, որ հատկապես Մալաթիայի գավառի բնակավայրերում հայերն ու ասորիները հաճախում էին ոչ միայն նույն եկեղեցին (հիմնականում ասորիներն էին, որ, չունենալով տվյալ բնակավայրում եկեղեցի, այցելում էին հայկական եկեղեցի), նաև հաճախում էին մինևույն դպրոցը:

<sup>44</sup> Արարատ, 1914, թիւ Թ, սեպտեմբեր, Ս. Էջմիածին, էջ 811: *Stu նաև՝ Population Armenienne de la Turquie; Avant la Guerre, Statistiques ntables par le Patriarcat Armznien de Constantinople, Paris, Impriemerie H : Turabian, 1920, p. 9.*

<sup>45</sup> Բախտիկյան Ս., Ոսկեգետակ, Գ հատոր, նուիրում՝ Արաբկիրի, Չմշկածագի, Խարբերղի, Մալաթիոյ պատմութեան եւ ազգագրութեան, 1948, Տպ. Հայկ-Պապ-Իտրիս, Պէյրուք, էջ 319:

<sup>46</sup> Naayem Rev. J. Shall this Nation Die? Chaldean Rescue, New York, 1921, p. 214.

<sup>47</sup> Արարատ, 1914, թիւ Թ, էջ 809: Տես նաև՝ Խտարուա Ա., Ասորիների ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում և հարակից թյուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 60:

<sup>48</sup> Էփրիկյան Ա., Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 162:

Նահանգի տարածքում ապրում էին նաև փոքրաթիվ քանակությամբ հույներ: Ըստ թուրքական պաշտոնական վիճակագրության՝ 1911-1912 թթ. Խարբերդի նահանգում հունական համայնքը կազմում էր 971 մարդ<sup>49</sup>: Կարելի է ենթադրել, որ պաշտոնական վիճակագրության մեջ նվազեցված էր ոչ միայն հայ բնակչության, այլ նաև քրիստոնյա մյուս ժողովուրդների՝ տվյալ դեպքում հույների թվաքանակը: Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության մեջ Խարբերդի նահանգի տարածքում ապրող հույների թվաքանակի վերաբերյալ տվյալ չկա:

Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև հայ բնակչության ներգրավվածությանը նահանգի տնտեսական կյանքին, ներկայացվում են նահանգի հայ բնակչության հիմնական զբաղմունքները, մասնակցությունը առևտրի, վաճառականության, երկրագործության ոլորտներում: Խարբերդի նահանգի գավառակներն ունեին զարգացման առանձնահատկություններ: Խարբերդի, Մալաթիայի, Չարսանջակի գավառակներում առավել նպաստավոր պայմաններ կային երկրագործության տարբեր ճյուղերի զարգացման համար: Տարածքում քիչ չէին նաև այն բնակավայրերը, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն էր, կամ՝ եգակի արհեստները: Նման բնակավայրերում հայերը մեծամասնություն չէին կազմում: Ինչ վերաբերում է քաղաքներին ու քաղաքատիպ ավաններին, գյուղաքաղաքներին, ապա դրանցից գրեթե բոլորում կար ստվար կամ նվազ թվով հայ բնակչություն. պատճառն այն է, որ կայսրության ողջ տարածքում, նույնիսկ գրեթե ամբողջությամբ թուրքաբնակ կամ քրդաբնակ մասերում, հիմնական արհեստներն ու առևտուրն անհնար էր պատկերացնել առանց հայերի գործուն մասնակցության: Քանի որ արհեստներով ու առևտրով հիմնականում զբաղվում էին քաղաքաբնակները, ուստի անհրաժեշտություն էր, որ այդ բնակավայրերում լինեին որոշակի թվաքանակով նաև հայ բնակիչներ: Նահանգի տարբեր գավառների բնակավայրերում՝ լինի դա քաղաք, թե՛ գյուղ հիմնական արհեստներին տիրապետում էին հայերը: Արհեստներից զարգացած էր մետաքսագործությունը, կերպասեղենի արտադրությունը, երկաթագործությունը, հյուսնությունը և այլ ճյուղերի: Մետաքսագործության մեջ նոր խոսք էր Ֆաբրիկատորյանների գործարանը, որը եգակի էր ոչ միայն նահանգում, այլ նաև կայսրության տարածքում: Ի տարբերություն հայերի՝ թուրքերը հիմնականում տիրապետում էին մսավաճառությանը, նպարավաճառությանը, պայտագործությանը: Առևտրական կյանքը ևս աշխույժ էր հայերի շնորհիվ, որոնք վաճառականությամբ զբաղվում էին երկար տարիներ, կային ձևավորված առևտրական տներ, որոնք մեր ուսումնասիրած ժամանակահատվածում զբաղվում էին նաև բազմաթիվ մթերքների, ապրանքատեսակների թե՛ ներկրմամբ և թե՛ արտահանմամբ: Խարբերդից արտահանվում էր բամբակ, բուրդ, կաշի, մետաքս, գինի, մրգեր: Ներմուծվում էր օձառ, շաքար, սուրճ, կտորեղեն, մետաղ, կենցաղային իրեր և այլ ապրանքներ: Խարբերդի առևտրական տները գործարքներ էին կատարում Կոստանդնուպոլսի, Հալեպի, Տիգրանակերտի, Սամսունի, Ադանայի, այլ հայտնի կենտրոնների առևտրական ընկերությունների հետ: Լինելով հողի հիմնական մշակներն

---

49 Hewsen R. Golden Plain, տես՝ Armenian Tsopk /Kharbert, edited by R. Hovannisian, Costa Mesa, California, 2002, p. 41.

ու երկրագործական արտադրանք տվողները՝ հայերը, ինչպես Խարբերդի դաշտի գյուղերում, այնպես էլ նահանգի մյուս բնակավայրերում, հողագուրկ էին, թեև 20-րդ դարի սկզբներին նահանգի տարբեր երկրագործական կենտրոններում տարեցտարի ավելանում էին հողատեր հայերը, ինչը չէր կարող չնպաստել երկրագործության վերելքին:

**Երկրորդ ենթազխում՝ «Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը 1894-1896 թթ. կոտորածների տարիներին»**, անդրադարձել ենք Խարբերդի նահանգում համիդյան կոտորածների ընթացքին ու հետևանքներին: Խնդրո առարկա նահանգը Օսմանյան կայսրության վարչական այն միավորներից էր, որտեղ 1894-1896 թթ. կոտորածներն ու բռնի իսլամացումն առավել լայն ծավալներ ընդունեցին: Այստեղ զանգվածային կոտորածների գոհ դարձավ շուրջ 40000 հայ: Կոտորածների տարիներին նահանգի տարածքում բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000 հայ, որոնց մեծ մասը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեությանը, իսկ մյուսները համարվեցին նախկինում իսլամացած հայերի շարքերը: Իսլամ ընդունելու պահանջը խիստ էր դրված նաև կոտորածներից հետո: Ավելին՝ քրիստոնյաները զգուշացվում էին, որ բոլոր նրանք, ովքեր իսլամ չեն ընդունել, պետք է կոտորվեն: Հարկ է նշել, որ 1890-ականն թթ. ջարդերին բնորոշ էր ոչ միայն կանանց առևանգումն ու մուսուլմաններին կնության տալը, ինչը լայնորեն իրականացվեց 1915-1923 թթ. ընթացքում, այլ հատկապես տղամարդկանց իսլամացումն ու թլպատումը, ինչը բնորոշ չէր ցեղասպանության տարիներին, երբ տղամարդկանց ոչնչացմանն այլընտրանք չկար ընդհանրապես: Նահանգի տարածքում ապրող հայ բնակչությունը կոտորածների ընթացքում ոչ միայն մեծ թվով զոհեր էր տվել, այլ բնակչության մի կարևոր հատված հայտնվել էր անօթևան վիճակում՝ զրկված գոյության ամենասահրաժեշտ միջոցներից, սնունդից: Խոսքը նախևառաջ որբացած երեխաների մասին էր: Սա էր պատճառը, որ կոտորածներից հետո արագացան արտագաղթի տեմպերը:

**Երրորդ ենթազխում՝ «Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները»**, ներկայացվում է ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերդի նահանգում: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին նահանգի բազմաթիվ բնակավայրերից հայ բնակչության արտահոսք էր նկատվում դեպի ավելի ապահով, կենտրոնական բնակավայրեր: Մյուս կողմից, 19-րդ դարի վերջերից ակտիվացել էր հայության արտագաղթն ԱՄՆ: Արտագաղթի պատճառներն էին սոցիալական անապահով վիճակը, սակավահողությունը, իսկ 1890-ականների կեսերից արդեն՝ համիդյան կոտորածները, դրանցից հետո տիրող վիճակը, շարունակվող բռնի կրոնափոխության քաղաքականությունը:

Արտագաղթի կարևոր ազդակ էր նաև Խարբերդի նահանգում միսիոներական կազմակերպությունների ծավալած գործունեությունը, որոնց դերը հայ բնակչությանը լուսավորելու, կրթական գործին զարկ տալու գործում անուրանալի է: Վերջիններիս գործունեությունը չէր սահմանափակվում քաղաքներով, այլ ընդգրկում էր նաև գյուղական բնակավայրերը: Խարբերդում գործունեություն ծավալած հիմնական միսիոներական կազմակերպություններն ԱՄՆ-ից էին և Գերմանիայից: 19-րդ դարի վերջերին - 20-րդ դարի սկզբներին Խարբերդում փոքր կայան ունեին նաև ֆրանսիական Կապուցինները և Անարատ հղության կաթոլիկ հայ քույրերը:

Միսիոներների կատարած աշխատանքը դրական արձագանքներ գտավ բնակչության շրջանում. սա նաև նշանակում էր վստահություն, համակրանք այն երկրի նկատմամբ, որը ներկայացնում էին նրանք: XIX դարի կեսերից ամերիկացի միսիոներները մի քանի տասնյակ երկտեղ դպրոցներ բացեցին Խարբերդում, Մալաթիայում, Ակնում, Արաբկիրում, բազմաթիվ գյուղերում: Ամերիկյան միսիոներների հիմնադրած Եփրատ քոլեջը դարձավ ժամանակի լավագույն կրթօջախներից մեկը: Արտագաղթողների մեծ մասը հենց քոլեջների, դպրոցների շրջանավարտներ էին, որոնք ԱՄՆ-ում էին փնտրում ազատության, իրավահավասարության, պաշտպանվածության այն մթնոլորտը, ինչի մասին լսել էին իրենց ուսուցիչներից, ամերիկացի միսիոներներից և ինչը չկար հայրենիքում: Հատկանշական է, որ արտագաղթողները նախ և առաջ բողոքական եկեղեցու հետևորդ դարձածներն էին:

Արտագաղթի հետևանքով որոշ դրական փոփոխություններ եղան հայերի սոցիալ-տնտեսական կյանքում, աշխուժացավ նահանգի տնտեսական կյանքը, մյուս կողմից, հայաթափ եղան փոքրաթիվ հայ բնակչություն ունեցող մի շարք բնակավայրեր, նվազեց մյուսների հայության թվաքանակը:

### **Երկրորդ գլուխը՝ «ԽԱՐԲԵՐԴԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ XX ՂԱՐԻ ՍԿԶԲԻՆ», բաղկացած է երեք ենթագլխից:**

Հայ բնակչության թվաքանակի խնդիրը, թերևս, XIX դարի վերջերի և XX դարի սկզբների Խարբերդի նահանգին առնչվող հիմնախնդիրների մեջ ամենաբարդն է, քանի որ առավել հավաստի ու ամբողջական տվյալները բացակայում են: Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1912 թ. կազմված վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում ապրում էր 168000 հայ<sup>50</sup>: Պատրիարքարանի նշված տվյալի մեջ ներառված էր Մալաթիայի հարավային հատվածի հայության թվաքանակը: Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Ապահովաց հանձնաժողովի կողմից պատրաստված վիճակագրական ցուցակի տվյալների համաձայն՝ նահանգի հայ բնակչության թիվը 204000 էր, որն ըստ գավառների բաշխվում էր հետևյալ կերպ. Խարբերդի գավառ՝ 128000, Մալաթիայի գավառ՝ 36000, Դերսիմի գավառ՝ 40000<sup>51</sup>: Պատրիարքարանի արդեն 1913-1914 թթ. վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում բնակվող հայերի թվաքանակը նշվում է 124289, որից Խարբերդի գավառում՝ 68877, Մալաթիայի գավառում՝ 38705, Դերսիմի գավառում՝ 16707 հայ<sup>52</sup>: Մեկ այլ վիճակագրության համաձայն, որը տարբեր վիճակագրությունների, մասնավորապես Կիլիկիայի կաթողիկոսարանի դիվանի նյութերի համադրությամբ կազմել է Բ. Եղիայանը, Խարբերդի նահանգի հայ բնակչության թվաքանակը հաշվվում էր 200150 հոգի<sup>53</sup>:

Ատենախոսության այս մասում փորձ է արվել առանձին ուսումնասիրության միջոցով, համադրելով տարբեր աղբյուրների տվյալները, ըստ գավառների ու գավառակների տալ այս նահանգում հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ

<sup>50</sup> Արարատ, Էջմիածին, 1914, թիւ Թ, էջ 809:

<sup>51</sup> Թեոդիկ, «Ամենուն տարեցոյց», ԺԶ տարի, 1922, էջ 261:

<sup>52</sup> Kevorkian R., Paboudjian, Les Armeniens dans l'empire Ottoman. A la veille du Genocide, Paris, 1992, p. 59.

<sup>53</sup> Եղիայան Բ., Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 891:

սեփական դիտարկումներն ու հաշվումները: Ստացված տվյալները տարբերվում են պատրիարքարանի 1913-1914 թթ. տվյալներից, որոնք ևս միտում ունեին պակաս ցույց տալու տարբեր բնակավայրերում ապրող հայության թվաքանակը: Հատկապես այս նվազեցումը վերաբերում էր շնչերի քանակին: Հիմնական օրինաչափությունը, որ կիրառվել է հաշվումների ընթացքում, դա ընդունելով 1913-1914 թթ. պատրիարքարանի ներկայացրած տների թիվը, տան անդամների թվաքանակը հաշվարկել քաղաքում՝ 6, գյուղերում՝ 8 համամասնությամբ: Սակայն նահանգի տարածքում քիչ էին այն բնակավայրերը, որոնց հայության թվաքանակի վերաբերյալ տվյալներն ընդհանրապես բացակայում են պատրիարքարանի ցուցակներից: Նման դեպքերում հիմք են ընդունվել տվյալ բնակավայրի վերաբերյալ մյուս աղբյուրներում տեղ գտած տվյալները:

***Առաջին ենթազխում*** անդրադարձ է կատարված Խարբերդի գավառի Խարբերդ, Կապան-Մադեն, Փոթուրկե, Ակն, Արաբկիր գավառակների հայ բնակչության թվաքանակի խնդրին: Համաձայն ուսումնասիրության՝ Խարբերդի գավառակում ընդգրկվել է 2 քաղաք և 54 գյուղ, Կապան-Մադենի գավառակում՝ 1 քաղաք, 2 գյուղ, Փոթուրկեում՝ 1 գյուղ, Ակնում՝ 1 քաղաք, 10 գյուղ, Արաբկիրում՝ 1 քաղաք, 15 գյուղ: Ընդհանուր առմամբ՝ XX դարի սկզբին Խարբերդի գավառում, հաշվվում էր 99274 հայ բնակիչ:

Խարբերդի գավառակ	63225 շ.
Կապան-Մադեն գավառակ	1100 շ.
Փոթուրկեի գավառակ	679 շ.
Ակնի գավառակ	15888 շ.
Արաբկիրի գավառակ	18382 շ.
Ընդամենը	99274 շ.

***Երկրորդ ենթազխում*** նվիրված է Դերսիմի գավառի Խոզաթ, Մեծկերտ, Կըզլ Քիլիսե, Չարսանջակ, Չմշկածագ, Օվաճըզ (Հովտիկ) գավառակների հայ բնակչության թվաքանակի խնդրին: Նշենք, որ պատրիարքարանի 1913-1914 թթ. ցուցակների անկատարությունն առավել ընդգծված է Դերսիմի գավառի բնակավայրերի ու հայ բնակչության թվաքանակի դեպքում, քանի որ այս ցուցակներում բացակայում են բազմաթիվ բնակավայրեր, որոնք նշված ժամանակաշրջանում հայաբնակ են եղել: Խոզաթի գավառակում ընդգրկվել է 1 քաղաք, 18 գյուղական բնակավայր, Մեծկերտում՝ 1 քաղաք, 19 գյուղ, Կըզլ Քիլիսեում՝ 17 գյուղ, Չարսանջակում՝ 2 քաղաք, 55 գյուղ, Չմշկածագում՝ 1 քաղաք, 28 գյուղ, Օվաճըզում՝ 17 գյուղ: Դերսիմի գավառում 1914-1915 թթ. դրությամբ, ըստ մեր հաշվարկների, ապրում էր 61116 հայ բնակիչ:

Խոզաթ գավառակ	9928 շ.
Մեծկերտ գավառակ	7398 շ.
Կըզլքիլիսե գավառակ	8976 շ.
Չարսանջագ գավառակ	18081 շ.
Չմշկածագ գավառակ	7421 շ.
Օվաճըզ գավառակ	9312 շ.
Ընդամենը	61116 շ.

**Երրորդ ենթագլուխը** վերաբերում է Մալաթիայի գավառի Մալաթիա, Պեհեսնի, Հյուսնի Մանսուր կամ Ադիանան, Աղձա Դաղ, Քյախտա գավառակների հայ բնակչության թվաքանակի խնդրին: Մալաթիայի գավառակում 1914-1915 թթ. դրությամբ, ըստ մեր ուսումնասիրության, կար մեկ քաղաք, 4 գյուղ, Պեհեսնիում՝ մեկ քաղաք, 8 գյուղ, Հյուսնի Մանսուրում՝ մեկ քաղաք, 20 գյուղ, Աղջա Դաղում՝ մեկ քաղաք, 4 գյուղ, Քյախտայում՝ 74 հայաբնակ բնակավայր: Ընդհանուր առմամբ, Մալաթիայի գավառում 1914-1915 թթ. դրությամբ ապրում էր 39568 հայ բնակիչ:

Մալաթիայի գավառակ	17064 շ.
Պեհեսնի գավառակ	4558 շ.
Հյուսնի Մանսուր գավառակ	5412 շ.
Աղձա դաղ գավառակ	1817 շ.
Քյախտա գավառակ	10717 շ.
Ընդամենը	39568 շ.

Այսպիսով, եթե պատրիարքարանի ներկայացրած 1882 թ. վիճակագրության համաձայն՝ Խարբերդի նահանգում ապրում էր 270000 հայ<sup>54</sup>, ապա, ըստ մեր հաշվումների, 1915 թ. դրությամբ Խարբերդի նահանգի Խարբերդ, Դերսիմ, Մալաթիա գավառներում ապրում էր շուրջ 200000 քրիստոնյա հայ բնակիչ:

Խարբերդի նահանգի տարածքում 16-19-րդ դարերի ընթացքում կրոնափոխ արված հայերի մի մասը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին դեռևս պահպանում էր ազգային ավանդույթների ու քրիստոնեական ծիսակարգի որոշակի տարրեր: Բնակչության այս հատվածը, որ գրականության մեջ ստացել է «կեսկեսներ» անվանումը, հաճախ դուրս է մնացել ուսումնասիրողների ուշադրությունից: Ուսումնասիրվող տարածքում որպես նախկինում հայաբնակ, ապա կրոնափոխ արված բնակավայրեր են հիշատակվում հատկապես Ակնի, Արաբկիրի գավառակներում, Դերսիմի, Մալաթիայի գավառներում: Այս մասին են փաստում տվյալ բնակավայրերի հայկական անվանումները, պահպանված եկեղեցիների ու վանքերի ավերակները, բնակչության էթնիկ պատկանելիության հիշողությունները: Մասնավորապես, բազմաթիվ վկայություններ կան Ակնի Սանտուխ, Ապրանք, Արկու, Հաբեղոնց, Հաբեղոնցի Ագրակ, Միջին գեղ, Վան գեղ, Աղրիկ, Կաշո, Ուռեկ, Ավերակ, Սանախսի, Խասա, Հեղդար, Գոմսկան, Արտոս, Սերկևիլ գյուղերի մասին, որոնց հայ բնակիչներն իլամացվել էին 18-րդ դարի ընթացքում: Ռ. Գևորգյանը, բացի այս գյուղերը, հիշատակում է նաև քիչ հայտնի Սալահլու, Յագուլլու, Չիպվեր, Պաղաշտաշ, Բաղչե, Փաշայեկ, Թավուկ, Աթմա, Թաբատ, Քահարան, Փաշաղի, Վերգան, Գիջեգի, Չալթ, Դիլի, Բազմաշեն, Վերի Քենդիր, Վարի Քենդիր, Երգի գյուղերը<sup>55</sup>, որոնց հայ բնակչությունը ևս բռնի իլամացվել էր 1770-1800-ական թթ.: Ընդհանուր առմամբ, Ռ. Գևորգյանն Ակնի տարածքում 1915 թ. դրությամբ հիշատակում է իլամացած հայերի 36 գյուղ: Վերոնշյալ բնակավայրերում ապրող իլամացած հայերի թվաքանակը նա

<sup>54</sup> Արարատ, 1914, թիւ Թ, էջ 811:

<sup>55</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 380-381:



հաշվում է 5157: Հեղինակը հավաստում է, որ այս մարդիկ նույնիսկ գաղտնիաբար քրիստոնեական ծեսեր էին կատարում և, ինչն ավելի հետաքրքիր է, թուրքերը նրանց շարունակում էին համարել «գյավուրներ» (անհավատներ)<sup>56</sup>:

Արաբկիրի գավառակի գյուղերը ևս հիմնականում հայկական անվանումներ ունեին: Օրինակ՝ Աշոտկա, Թարխանիկ, Բաղնիք, Դավթի, Մատուռկա, Փուլ, Բագուսի, Սոսիկ և այլն: Այստեղ ևս խոսքն իսլամացած հայերի մասին է:

Նման բնակավայրերը քիչ չէին նաև Դերսիմի գավառում: Գ. Հալաջյանը, 1909-1914 թթ. ընթացքում շրջելով Դերսիմով, հիշատակում է, մասնավորապես, Խոզաթի շրջանում Իպիզալե, Վարդենիկ, Փիր Սուլթան, Չարսանջակում՝ Մոխնտի, Լոռչմար գյուղերը, որտեղ բնակվում էր 580 տուն քրդացած հայ<sup>57</sup>: Հիշատակված բնակավայրերը, թերևս, եզակի չէին, միայն Դերսիմում դրանց թիվն անցնում էր մի քանի տասնյակը: Ռ. Գևորգյանը Չմշկածագի Ս. Թորոս նահիեի 20 գյուղերում 1915 թ. դրությամբ հաշվում է 4935 իսլամացած հայ<sup>58</sup>: Վերջինները ևս բռնի իսլամացվել էին 18-րդ դարի ընթացքում: Բերված մի քանի օրինակներից երևում է, որ նահանգի տարածքում բազմաթիվ էին այն գյուղերը, որոնց հայությունը բռնի կրոնափոխ էր արվել դեռևս 17-18-րդ դարերի ընթացքում: Կարևոր է արձանագրել, որ տվյալ բնակչությունը 20-րդ դարի սկզբներին իսկ պահում էր հայկական ծագման հիշողությունը:

Ցավոք, նահանգի տարածքում ապրող իսլամացած հայերի թվաքանակի վերաբերյալ հստակ թիվ հնարավոր չէ նշել, ենթադրվում է, որ նրանց թվաքանակը կազմում էր մի քանի տասնյակ հազար:

**Երրորդ գլուխը՝ «ԽԱՐԲԵՐՂԻ ՆԱՀԱՆԳԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 1915-1923 ԹԹ.»,** բաղկացած է երկու ենթագլխից:

**Առաջին ենթագլխում՝ «Ցեղասպանության իրագործման մեխանիզմները Խարբերղի նահանգում 1915 թ.»,** ներկայացվում է Խարբերղի նահանգից հայ բնակչության տեղահանության, կոտորածների քաղաքականությունը 1915 թ. ընթացքում: Տարբեր վկայությունների համաձայն (ընդ որում՝ ինչպես տեղացիների, այնպես էլ օտարազգիների՝ նահանգի հայ բնակչությունը ոչնչացվել է նույն մեխանիզմների կիրառմամբ, ինչպես մյուս նահանգներում: Ավելին, բոլոր գործողությունները, որ իրականացվել են նահանգի տարածքում, լավ համակարգված էին ու ներառում էին Հայոց ցեղասպանությանը բնորոշ բոլոր գծերը: Ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ նահանգի հայ բնակչության շուրջ 80%-ը սպանվեց, մահացավ սովից, համաճարակային հիվանդություններից: Խարբերղի նահանգի հայության հիմնական սպանդարանները դարձան Դևե Բոյնի ձորը, Ծովք լճի շրջակայքը, Թլաբերղը, Գյումուշ Մադենը, Մալաթիայի Իզոլի գյուղի շրջակայքը, Ինտարե լեռան ստորոտը, Արղանա Մադենը, Դիարբեքիրը, Դեր-Ջորը, այլ վայրեր:

Բռնի իսլամացման բազմաթիվ դեպքերի մասին վկայությունները թույլ են տալիս ենթադրել, որ Խարբերղի նահանգում իսլամացած հայերի թիվը ևս բավական

<sup>56</sup> Նույն տեղում:

<sup>57</sup> Հալաջյան Գ., Դերսիմի հայերի ազգագրությունը, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 5, Երևան, 1973, էջ 33, 35, 38, 96, 98:

<sup>58</sup> Kevorkian R., Paboudjian P., նշվ. աշխ., էջ 386:

բարձր տոկոս էր կազմում: Դա նախ և առաջ վերաբերում էր Ակնին ու Արաբկիրին: Հայոց ցեղասպանության տարիներին թուրքական կառավարությունն աննկարագրելի դաժանությամբ վարվեց հայ երեխաների, որբերի հետ, որոնք ենթարկվեցին տեղահանության, կոտորածների, իսլամացման:

1915 թ. Խարբերդի նահանգում կազմակերպվեց նաև այլ նահանգներից տեղահանված տասնյակ հազարավոր հայերի սպանողը: Այն ժամանակ, երբ Խարբերդ և Մեզրե քաղաքների հայության տեղահանությունը նոր էր սկսվել, Խարբերդի նահանգի տարածքում հայտնվեցին այլ նահանգներից տեղահանված հայեր: Հազարավոր հայեր էին գալիս հյուսիսից՝ Էրզրումից, Երզնկայից, Սեբաստիայից, Տրապիզոնից և այլ վայրերից:

***Երկրորդ ենթագլխում՝ «Խարբերդի նահանգի հայաթափումը 1916-1923 թթ.»***, անդրադարձ է կատարված 1916-1923 թթ. ընթացքում Խարբերդի նահանգում կենդանի մնացած հայերի նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությանը, որը գրեթե նույնն էր, ինչ 1915 թ., պարզապես ծավալներն էին տարբեր: Նահանգի մի քանի բնակավայրերում այս ժամանակահատվածում ապրում էր ավելի քան 30000 հայ, որոնցից կեսը կամ գուցե կեսից ավելին կազմում էին տեղաբնիկները: Այս տարիների ընթացքում տարբեր բնակավայրերում ապաստանած հայերը ենթարկվում էին տեղահանությունների, կոտորածների, բռնությամբ իսլամացվում: Այս դեպքում արդեն իսլամացումն իրական այլընտրանք էր տեղահանությանը: 1922-1923 թթ. տեղահանությունը գրեթե ամբողջությամբ վերջ դրեց քրիստոնյա հայ բնակչության գոյությանը Խարբերդի նահանգում: Այս տեղահանության հիմնական ուղղությունը կրկին Հալեպն էր: 1923 թ. հետո նահանգի տարածքում ապրում էին միայն իսլամացած հայեր:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ** հանրագումարի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները.

- Խարբերդի նահանգի տարածքում ընդգրկված բազմաթիվ բնակավայրերի (Արաբկիրի, Ակնի, Չարսանձագի, Չմշկածագի գավառակների, Մալաթիայի գավառի) հայ բնակիչները ենթարկվել են Օսմանյան կայսրության իրականացրած բռնի իսլամացման քաղաքականությանը, ինչը շարունակվել է նաև XIX դարի ընթացքում:
- XIX դարի կեսերից սկսեց Խարբերդի նահանգից հայ բնակչության արտագաղթը դեպի ԱՄՆ, որը կապված էր «Օտարերկյա միսիաների լիազորների ամերիկյան կոմիտեի»՝ Խարբերդում բացած կայանի գործունեության հետ: Խարբերդի նահանգից հայերի ԱՄՆ արտագաղթն ուներ նաև տնտեսական, քաղաքական պատճառներ. սակավահողությունը, հարկային ճնշումները, իրավագրկությունը, անվստահության մթնոլորտը շատերին ստիպում էր նախ աշխատանք, ապրուստի միջոց, ապա նաև՝ վերջնական հանգրվան փնտրել ԱՄՆ-ում: Համիդյան կոտորածներից հետո արտագաղթի տեմպերն աճեցին:
- Հայերի արտագաղթն ԱՄՆ ունեցավ ինչպես դրական, այնպես էլ՝ բացասական հետևանքներ: Դրական հետևանքն այն էր, որ արտագաղթած հայերի օժանդակությամբ նրանց որոշ հարազատներ Խարբերդի նահանգում հողատերեր դարձան, աշխուժացավ նահանգի տնտեսական կյանքը: XIX

դարի վերջերին և XX դարի սկզբներին նահանգի հայ բնակչության ներգրավվածությունը տնտեսական կյանքին, տնտեսության բազմաթիվ ճյուղերի զարգացման գործում ունեցած ներդրումը մեծ է: Հայ արհեստագործների շնորհիվ այս շրջանում նահանգում մեծ վերելք ապրեցին մի քանի կարևոր արհեստներ, մեծացան տեղի երկրագործական ու արհեստագործական արտադրանքի արտահանման ծավալները: Արտագաղթի բացասական հետևանքն այն էր, որ այն անդրադարձավ նահանգի հայ բնակչության թվաքանակի վրա: Նման ժողովրդագրական գործընթացներն առավել տեսանելի էին սակավաթիվ հայություն ունեցող բնակավայրերում:

- 1895-1896 թթ. համիդյան կոտորածների ընթացքում արձանագրվեցին հայերի զանգվածային ոչնչացման գրեթե բոլոր տարրերը, ինչպես՝ 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին: 1895-1896 թթ. ընթացքում Խարբերդի նահանգում զանգվածային կոտորածների զոհ դարձավ շուրջ 40000 հայ: Կոտորածների տարիներին նահանգի տարածքում բռնությամբ կրոնափոխ արվեց շուրջ 15000 հայ, որոնց մեծ մասը հետագա տարիներին վերադարձավ քրիստոնեությանը՝ ի տարբերություն նախորդ ժամանակահատվածներում իսլամացածների: Կարելի է ենթադրել, որ համիդյան կոտորածների տարիներին իսլամացած հայերի կրոնափոխությունը, թերևս, առերես կրոնափոխություն էր և նրանք, ովքեր, այնուամենայնիվ, ջարդերից հետո չվերադարձան քրիստոնեությանը, շարունակում էին պահել իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ հիշողությունը:
- XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Խարբերդի նահանգի տարածքում արձանագրված ժողովրդագրական փոփոխությունների արդյունքում հայ բնակչության թվաքանակը ոչ թե աճել էր, այլ՝ նկատելիորեն նվազել:
- Համաձայն տարբեր աղբյուրների տվյալների համադրությամբ կատարված հաշվումների՝ 1915 թ. դրությամբ Խարբերդի նահանգում ապրում էր 199958 քրիստոնյա հայ բնակիչ, այդ թվում՝ 99274՝ Խարբերդի, 61116՝ Դերսիմի, 39568՝ Մալաթիայի գավառներում: Նահանգի տարածքում ապրում էին նաև տասնյակ հազարավոր «կեսկեսներ»՝ իսլամացած, քրդացած հայեր:
- Թուրքական իշխանությունների կողմից իրագործված Հայոց ցեղասպանության տարիներին Խարբերդի նահանգի հայ բնակչությունը, ինչպես մյուս բնակավայրերում, ենթարկվեց տեղահանության, կոտորածների: Արդյունքում, նահանգի հայ բնակչության շուրջ 80%-ը զոհ գնաց Հայոց ցեղասպանությանը:
- 1915-1923 թթ. Խարբերդի նահանգի տարածքում ընդգծված դրսևորվել է բռնի իսլամացման քաղաքականությունը, որն այս ընթացքում իրականացվում էր առավելապես կանանց նկատմամբ: 1916-1923 թթ. ընթացքում նահանգի տարբեր բնակավայրերում շարունակում էին ապրել ավելի քան 30000 քրիստոնյա հայեր, նաև՝ ցեղասպանության տարիներին իսլամացած շուրջ 20000 հայեր, որոնց նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականությունը գրեթե նույնն էր, ինչ 1915 թ., պարզապես ծավալներն էին տարբեր: Այս տարիներին տարբեր բնակավայրերում ապաստանած հայերը ենթարկվում էին տեղահանությունների, սպանությունների, բռնի

իսլամացման 1922-1923 թթ. Խարբերդի նահանգից տեղահանվեցին վերապրող գրեթե բոլոր քրիստոնյա հայերը: Կարելի է եզրակացնել, որ այդուհետ նահանգի տարածքում եղած հայերը Հայոց ցեղասպանության տարիներին կրոնափոխ եղածներից էին, ովքեր վերադարձել էին քրիստոնեությանը, վերագտել հայի իրենց ինքնությունը:

- 1915-1923 թթ. իրագործված Հայոց ցեղասպանությունը դարձավ Արևմտյան Հայաստանը հայաթափելու՝ թուրքական իշխանությունների դարեր շարունակ վարած քաղաքականության վերջին փուլը: Այն տարբեր շրջափուլեր անցավ՝ հայկական բնակավայրերի հայության իսլամացում, արտագաղթի համար նպաստավոր պայմանների ստեղծում, զանգվածային կոտորածներ, ցեղասպանություն: Թվարկված փուլերը ցայտուն կերպով դրսևորվեցին Խարբերդի նահանգում, որը կարելի է համարել նշված քաղաքականության իրագործման «դասական» տարածաշրջան:

**Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Ժողովրդագրական փոփոխությունների հիմնական միտումները Խարբերդի նահանգում XIX դարի վերջին XX դարի սկզբին, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 9, Երևան, 2008, էջ 168-180:
2. Խարբերդի նահանգից հայ բնակչության ԱՄՆ արտագաղթի հիմնական պատճառները (1880-1914 թթ.). Արտագաղթի հետևանքները, «Մերձավոր Արևելք-V, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, Երևան, 2008, էջ 37-41:
3. Հայոց ցեղասպանության ընթացքը և հետևանքները Խարբերդի նահանգում, «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 10, Երևան, 2009, էջ 201-217:
4. Խարբերդի նահանգի Ակն գավառակի հայ բնակչության թվաքանակը XX դարի սկզբին, «Էջմիածին», 2012, թիվ Ե, էջմիածին, էջ 118-123:

**БАБЛУМЯН АРПИНЕ РУБИКОВНА**

**АРМЯНСКОЕ НАСЕЛЕНИЕ ХАРБЕРДСКОЙ ПРОВИНЦИИ  
ЗАПАДНОЙ АРМЕНИИ (ИСТОРИКО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)**

*Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по  
специальности 07.00.01 "История Армении"*

*Защита состоится 10 июля 2012 г., в 14<sup>00</sup>, по адресу пр. Маршала Баграмяна 24/4, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).*

**РЕЗЮМЕ**

Политика притеснения и изгнания армян из Западной Армении и армянонаселенных областей Османской империи проводилась властями на протяжении веков. Важной частью их политики, направленной против армянского населения, было изменение демографического облика в пользу мусульманского населения. Массовая резня армян в конце XIX века также привела к большим демографическим изменениям. В результате Геноцида армян почти все армянское население Западной Армении и армянонаселенных областей Османской империи фактически исчезло. Изучение проблем жизнедеятельности и численности армянского населения Харбердской провинции может способствовать комплексному изучению этой проблемы, так как вышеуказанные тенденции демографических изменений являются закономерными для армянского населения этой административной единицы.

Диссертация состоит из предисловия, трех глав, заключения, библиографии и приложений, где приводятся таблицы с численностью армян в разных областях провинции.

Глава 1. "Этно-демографическая картина Харбердской провинции в конце XIX - начале XX веков". Рассмотрено административное деление провинции и вовлечение армян в экономическую жизнь региона. Речь идет также об основных тенденциях демографических изменений, в частности, об эмиграции армян из Харберда в США, что имело экономические и политические причины. Но в основном, темпы эмиграции были связаны с деятельностью американских миссионеров. 1890-х гг. темпы эмиграции возросли, так как в Харберде проводилась особенно крупномасштабная резня армян. На территории провинции было истреблено около 40 000 армян. Около 15 000 армян были исламизированы.

Глава 2. "Численность армянского населения Харбердской провинции в начале XX века". Согласно подсчетам до Геноцида армян в 5 городах и 82 селах одноименной области провинции проживали 99 274 армянина.

Харберд	63225 душ (д)
Капан-Маден	1100 д
Потурке	679 д

Акн	15888 д
Арабкир	18382 д
Всего	99274 д

В то же время в 5 городах и 154 селах области Дерсим, согласно подсчетам проживали 61 116 армян.

Хозат	9928 д
Мецкерг	7398 д
Кэл Килисе	8976 д
Чарсанджак	18081 д
Чмшкацаг	7421 д
Овачк (Овтик)	9312 д
Всего	61116 д

В 4 городах и 110 селах Малатии, согласно подсчетам проживали 39 568 армян.

Малатия	17064 д
Пеесни	4558 д
Хюсни Мансур	5412 д
Ахча дах	1817 д
Кяхта	10717 д
Всего	39568 д

Всего на территории провинции, согласно подсчетам проживали около 200 000 армян христианского вероисповедания. В городах число членов семей было принято 6, в селах - 8. На территории провинции было немало населенных пунктов, о которых не было упомянуто в таблицах патриаршества: в таких случаях были учтены данные из других источников. К сожалению, трудно привести более конкретные данные о численности исламизированных армян, можно только предположить, что их было несколько десятков тысяч.

Глава 3. “Армянское население Харбердской провинции в 1915-1923 гг”. Посвящена политике депортации и истребления армян в 1915-1923 гг. Согласно свидетельств очевидцев и армян, выживших во время Геноцида, армянское население данной провинции было истреблено теми же механизмами и методами, что и в других областях империи. Исследование дает возможность убедительно утверждать, что в 1915-1918 гг. армянское население Харбердской провинции в числе других регионов стало жертвой политики депортации, истребления и насильственной исламизации, проводимой младотурецкими властями в Османской империи. На территории провинции было уничтожено также несколько десятков тысяч армян, депортированных из других областей, в частности, из Карина (Эрзрум), Трапизона, Ерзнка, Себастии (Сваз). Политика властей в отношении армян не изменилась и в последующие годы правления кемалистов. В результате депортации 1922-1923 гг. армянское население Харбердской провинции фактически исчезло. На территории Харбердской провинции остались только исламизированные армяне.

В заключении обобщаются основные выводы и положения.

# BABLUMYAN ARPINE RUBIK

## ARMENIAN POPULATION OF KHARBERD PROVINCE OF WESTERN ARMENIA (HISTORICAL AND DEMOGRAPHIC RESEARCH)

*Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of  
"History of Armenia" 07.00.01.*

*The defense of the dissertation will be held on 10 July, 2012, 14<sup>00</sup> at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4)*

### SUMMARY

Policy of Ottoman authorities against Armenians living in Western Armenia and in other territories of empire processed for centuries. The important part of that policy was the change of demographic situation in those territories in favor of Muslim population. Mass massacres of Armenians at the end of 19-th century also brought to demographic changes. As a result of The Armenian genocide Western Armenia and other provinces of the Ottoman Empire populated by Armenians lost their Armenian population. The research on social-economic life and number of Armenian population in Kharberd province of Western Armenia will promote to the complex research of problem, for that tends of demographic changes were regular for this province.

Chapter 1. „Ethno-demographic situation of Kharberd province at the end of XIX century- beginning of XX century” presented the administrative division of province, occupations of Armenians, the main tends of demographic changes in Kharberd province. One of the main tends was immigration of Armenians to USA, which had economic, social, political causes. Immigration was linked also with the activities of American missionaries. The number of Armenians leaving for USA increased after Hamidian massacres. About 40000 Armenians were killed during these massacres, about 15000 were Islamized by force.

Chapter 2. „The number of Armenian population of Kharberd province in the beginning of XX century”. 5 towns and 82 villages are included in Kharberd region of province with 99274 Armenians (see below).

Kharberd	63225
Kapan Maden	1100
Poturke	679
Akn	15888
Arabkir	18382
Total	99274

According to the calculation 61116 Armenians lived in 5 towns and 154 villages of Dersim region before 1915 (see below).

Khozat	9928
Meckert	7398
Kzyl Kilise	8976
Charsanjak	18081
Chmshkazag	7421
Ovachk (Hovtik)	9312
Total	61116

According to the calculation 39568 Armenians lived in 4 towns and 110 villages of Malatia region before 1915 (see below).

Malatia	17064
Pehesni	4558
Hysni Mansur	5412
Aghcha Dagh	1817
Qiaghata	10717
Total	39568

According to the calculation about 200000 Christian Armenians lived in Kharberd province before the genocide. Number of family members in towns were calculated 6, in villages – 8. There were settlements in the territory of Kharberd province, the number of inhabitants of which was not included in the tables of Armenian Patriarchate of 1913-1914. In those cases we accepted the date from other sources. It is too difficult to give concrete number of Islamized Armenians, living in the territory of province, but it must be mentioned that they numbered ten thousands.

Chapter 3. „Armenian population of Kharberd province in 1915-1923”. This chapter includes two subchapters: „The mechanisms of implementation of genocide in Kharberd province in 1915” and „The liquidation of Armenians from Kharberd in 1916-1923”. The policy of deportation, massacres of Armenians in Kharberd province in 1915-1923 was presented in this chapter. According to the research the same mechanisms and methods were implemented here as in other provinces of empire: Armenian population of Kharberd province fell the victim of the policy of deportation, massacres, Islamization implemented in the Ottoman Empire by Young Turkish government in 1915-1918. Ten thousands of deportees from Karin (Erzrum), Trabizon, Erzinka, Sebastia (Svaz) also were killed in the territory of Kharberd province. The policy concerning Armenians was the same during the Kemalist regime. After deportation in 1922-1923 there wasn't Christian Armenian population in Kharberd. Only Islamized Armenians lived in territory of province.

Conclusion summaries the main results of the thesis based on the clarifications of main problems.